
**ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ
ԿԱՌՈՒՑԱՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ԵՂԻՇԵ)**

ՍԵՅՐԱՆ ՁԱՔԱՐՅԱՆ

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո սկսվում է ազգային ինքնության նոր հարացույցի կառուցաստեղծման գործընթացը, որն իր տեսական արտահայտությունը գտավ 5-7-րդ դարերի հայ մատենագիրների աշխատություններում: Հայ մատենագիրները, լինելով քրիստոնյաներ, քրիստոնեության արժեքների հիման վրա փորձում են ստեղծել ազգային ինքնության նոր հարացույց: Նշենք, որ յուրաքանչյուր ազգային ինքնության հարացույցում առանցքայինը էթնիկականի և ոչ էթնիկականի հարաբերակցության հարցն է: Ժամանակային առումով այդ հարաբերակցությունը, որպես կանոն, ունենում է հետևյալ փուլերը. ա) ոչ էթնիկականի ներմուծում և յուրացում, բ) ոչ էթնիկականի նույնացում էթնիկականի հետ և ոչ էթնիկականի վերածումը էթնիկականի: Հայոց ինքնության քրիստոնեական հարացույցի կերտման դեպքում այս փուլերը նշանակում են. ա) քրիստոնեական կրոնի ընդունում, տարածում և քրիստոնեական արժեքների յուրացում, բ) ինքնանույնականացում քրիստոնեության հետ և քրիստոնեության վերածումը ինքնության համակարգաստեղծ բաղադրիչի: Առաջին փուլի հիմնական իրադարձություններն էին. ա) 301 թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակում, բ) կրոնական հաստատությունների և ինստիտուտների հիմնադրում, գ) գրերի գյուտ և Աստվածաշնչի հայերեն թարգմանություն, դ) քրիստոնեական գրականության (թարգմանություններ ու ինքնուրույն երկեր) ստեղծում: Երկրորդ փուլում տեսականորեն կառուցակազմվում է ինքնության հարացույցը, այսինքն՝ տեղի է ունենում նույնականացում քրիստոնեության հետ, և քրիստոնեությունը իր արժեքային համակարգով դառնում է հայոց ինքնության բացահայտիչը:

Սույն հոդվածում կվերլուծենք ինքնության կառուցաստեղծման երկրորդ փուլի ներկայացուցիչներից մեկի՝ Եղիշեի հայացքները՝ հիմք ընդունելով նրա «Վարդանի և հայոց պատերազմի մասին» աշխատությունը: Նշենք, որ Եղիշեի աշխատությունը ազգային-կրոնական գիտակցության զարթոնքի արտահայտություն է, այսինքն՝ ստեղծվել է մի ժամանակաշրջանում, երբ ձևավորվում էր ազգի նոր «Մենք»-կոնցեպցիան կամ ինքնության նոր հարացույցը: Բնական է՝ այս հանգամանքն իր դրոշմն է թողել նրա հայացքների վրա: Որքան էլ նա լիներ իր կողմից ներկայացվող դեպքերի ականատեսը և ժամանակակիցը, այնուհանդերձ իր աշխատությունը գրել է այդ դեպքերից որոշ ժամանակ անց (ըստ Ե. Տեր-Մինասյանի՝ Եղիշեի «Պատմությունը գրված է 458-460 թթ., մասամբ, հավանորեն, 464 թ.»¹, երբ արդեն առկա էին Ավարայրի ճակատամարտի հետևանքները, և այդ ժամա-

¹ Ե. Տեր-Մինասյան, Եղիշե, «Հայ մշակույթի նշանավոր գործիչները (5-18-րդ դարեր)» գրքում, Եր., 1976, էջ 60:

նակի քաղաքական, կրոնական ու գաղափարական իրողությունները իրենց ազդեցությունն են թողել նրա պատմափիլիսոփայական ըմբռնումների վրա): Եղիշեն միաժամանակ հանդես է գալիս որպես ականատես, գաղափարախոս ու պատմիչ, ուստի բնական է, որ նա պետք է գաղափարականացներ պատմությունը և պատմականացներ գաղափարախոսությունը, այսինքն՝ միախառներ իրականն ու ցանկալին, օբյեկտիվն ու սուբյեկտիվը, պատմականն ու գաղափարականը, միջակայքն ու վախճանաբանականը: Ըստ Ե. Տեր-Մինասյանի՝ Եղիշեի աշխատությունը, «իսկապես պատմական վստահելի աղբյուր լինելով հանդերձ, վկայաբանական գունավորում ստացած մի դյուցազներգություն է, պատմական նյութ ունենալով՝ մի բանատեղծական քերթված, ո՛չ թե սոսկ պատմաբանի, այլ հոգով բանաստեղծի գործ...»²: Այլ խոսքով՝ նրա աշխատությունը որոշակի քաղաքական դիրքորոշումից պատմական իրադարձությունների գեղարվեստական ու գիտական վերահիմնաստավորման և վերակազմության արդյունք է³: Ուստի, տվյալ դեպքում մեզ համար կարևոր են դառնում Եղիշեի արժեքաաշխարհայացքային կողմնորոշումները, պատմական իրադարձությունների իմաստավորման ու գնահատման նրա եղանակներն ու ձևերը, պատմական գործիչներին նրա տված բնութագրումները, էքնիկականի ու կրոնականի, բարու և չարի, կյանքի և մահվան մասին նրա պատկերացումները: Ոչ պակաս կարևորություն են ներկայացնում նաև նրա տեքստի «թաքնված», չգիտակցված կողմերի կամ ենթատեքստերի վերլուծությունները: Որքան էլ Եղիշեն հանդես գա որպես քրիստոնեության ջատագով, նա նախ և առաջ հայ է, այսինքն՝ ունի հային բնորոշ արխետիպային գծեր, դիրքորոշումներ, որոնք կարող են անգամ նրա կողմից չգիտակցվել: Այսինքն՝ նա կաշկանդված է ոչ միայն իր գաղափարախոսության կարծրատիպերով, այլև ազգային ինքնության արխետիպերով, ազգային մտածելակերպի ու աշխարհատեսության արխետիպային կաղապարներով:

Քրիստոնեությունն ստեղծում է գրակենտրոն ու գրքակենտրոն մշակույթ, որն ունի ցանկացած տեքստ կազմելու իր կանոնները: Պատմությունը հյուսվում է Գրքի կանոնների համապատասխան, այսինքն՝ պատմությունը ձեռք է բերում գրքային բնույթ: Գիրքը Աստվածաշունչն է, ուստի աստվածաշնչյան թեմաները, դեպքերը և գործող անձինք դառնում են օրինակելի: Եղիշեն ոչ միայն և ոչ այնքան հետևում է իրականությանը, որքան իրականությունը, պատմական իրադարձությունները ընտրում ու ներկայացնում է Գրքի կանոններին ու պահանջներին համապատասխան: Ինքնության կառուցակազմումը վերածվում է ծեսի, որի միջոցով տեսաբան գաղափարախոսը փորձում է համախմբել մարդկանց խմբերը և ակտիվացնել նրանց՝ այս կամ այն գործողությունը կատարելու համար: Այդու-

² Նույն տեղում, էջ 67:

³ «Հին քրիստոնեական գրականությունը, - իրավացիորեն նկատում է Մ. Աբեղյանը, - և ոչ միայն մեր մեջ, ընդհանրապես հրապարակախոսական և միտումնավոր է: Դրա ձգտումն է եղել սովորեցնել, լինել օգտակար դաս ընթերցողների համար, կրոնաբարոյակրթական մի խրատ: Ուսուցանելու այս միտումը պահվում էր ոչ միայն բուն եկեղեցական երկերի մեջ, այլև աշխարհիկ թեմատիկայի ժամանակ և պատմության մեջ: Ուստի այդ առավել երևան պիտի գար մանավանդ այնպիսի պատմության մեջ, ինչպիսին է Եղիշեի երկը» (Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 335):

հանդերձ, ինքնության ծիսականացումը կատարվում է ոչ միայն Գրքի կանոններին, այլև ազգային արխետիպային դիրքորոշումներին, բանավոր մշակույթի և ինքնության հարացույցի արարման կանոններին համապատասխան: Այլ խոսքով՝ նրա աշխատության մեջ միահյուսվել են գրավոր և բանավոր մշակույթների շերտերը՝ տրամաբանական վերլուծությունն ու անմիջականությունը, բանականն ու զգացականը, իրականն ու երևակայականը:

Ինքնության քրիստոնեական հարացույցի կենտրոնում եկեղեցին է, որի շուրջ համախմբված են հավատացյալները: Հավատքը դառնում է ազգակիցների միավորման ու համախմբման հիմքը: Եկեղեցի և հավատք՝ ահավասիկ այն երկու արժեքները, որոնք պետք է կարգավորեն և իմաստավորեն մարդկանց գոյությունը: Այս հարացույցում եկեղեցին մասամբ փոխարինում է պետությանը, հավատքը՝ ազգակցությանը: Աշխարհիկ պետության մեջ ստեղծվում է «հոգևոր պետություն», որին աստիճանաբար անցնում է իրական իշխանությունը, կամ որը լավագույն դեպքում հավակնում է իշխանության: Համենայն դեպս, այլևս պատմական որևէ դեպք տեղի չի ունենում առանց հոգևոր առաջնորդի մասնակցության, առանց նրա խորհրդի կամ վճռի: Աշխարհիկ կամ նախկին հեթանոսական հարացույցի արժեքները հեղինակագրվում են, ստորադասվում նորին կամ լավագույն դեպքում՝ վերառնվում:

Կրոնական նոր հավատքը փոխում է մարդկանց զգացական ու մտավոր աշխարհի բովանդակությունն ու ուղղվածությունը, ձևավորում է մի աշխարհայացք, որում երկրային արժեքների փոխարեն հիմնականում են դառնում երկնային արժեքները: Մարդու կյանքի և մահվան, կենալու իմաստն ու նպատակը վերաիմաստավորվում են, ժամանակը հոսում է ապագայից դեպի ներկա՝ արժևորելով ներկայի բոլոր գործողությունները: Մահը վերածվում է անմահության տանող կամրջի: Բայց ոչ թե անիմաստ, չհասկացված մահը, այլ՝ գիտակցված մահը: «Ուն հոգիները թուլացած են երկնավոր առաքինությունից, սաստիկ երկյուղի մեջ է ընկած (նրանց) մարմնի բնությունը. ամեն հողմից շարժվում է և ամեն խոսքից վրդովվում և ամեն բանից դողում. այդպիսի մարդը երազական բաներով է անցկացնում իր կյանքը, իսկ մահվան ժամանակ էլ անդառնալի կորստյան է մատնվում: Ինչպես որ հնում մեկն ասել է՝ չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն: Ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից, իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում»⁴: Կատարյալ մարդու իդեալ է դառնում հավատքի մարտիրոսը, նահատակը, Քրիստոսի, երկնային Տիրոջ, երկնային թագավորության համար տառապող, զոհաբերվող անձը:

Ինքնության նոր հարացույցում հավատքը ստեղծում է համախմբման նոր դաշտ, որտեղ բոլորը դառնում են հավասար, սոցիալական ներդաշնակ ամբողջի լիիրավ անդամներ. «Այնուհետև տերը ծառայից ավելի չէր երևում, և ոչ էլ փափուկ մեծացած ազատը՝ տառապյալ գեղջուկից, և ոչ էլ

⁴ **Եղիշե**, Վարդանի և Հայոց պատերազմի մասին: Թարգմ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյանի, Եր., 1989, էջ 29 (այսուհետ սույն գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ միայն էջը):

մեկը մյուսից ավելի պակաս քաջության մեջ: Միևնույն հոժար սիրտն ունեին բոլորն էլ՝ տղամարդ ու կին, ծեր ու տղա և Քրիստոսի անունով բոլոր միաբանվածները: Որովհետև առհասարակ (բոլորն էլ) միևնույն զենքով զինվորվեցին և Քրիստոսի հավատի պատվիրանի միևնույն զրահը հագան, ճշմարտության միևնույն գոտիով ամրացրին իրենց մեջքերը թե տղամարդիկ և թե կանայք» (էջ 135):

Եղիշեի հիմնական խնդիրը հայ ազգի հոգեբանական նույնականացումն է քրիստոնեության հետ: Այդ պատճառով նրա համար հրատապ է դառնում նախ ցույց տալ զրադաշտականության նկատմամբ քրիստոնեական կրոնի բոլոր առումներով առավելությունն ու գերազանցությունը: Այսինքն՝ դա ոչ միայն սոսկ քրիստոնեական կրոնի պաշտպանություն է, այլև քրիստոնեական արժեքների վրա խարսխված ազգային ինքնության հարացույցի կառուցակազմում: Ազգը կամ ազգի մի ստվար հատված ձեռք է բերում արժեքային նշանակություն ունեցող նոր անվանում, որով նա իրեն զատում է մյուսներից (օտարներից կամ նույն ազգի այլ խմբերից): «Ո՞վ ենք մենք» հարցին Եղիշեն ունի հստակ պատասխան. «**Մենք քրիստոնյա ենք**»՝ ի տարբերություն ոչ քրիստոնյաների (հեթանոսների, անհավատների): Ըստ այդմ՝ նա հայերին անվանում է քրիստոնյա ազգ, որն ունի ծնողներ՝ **Սուրբ Ավետարանը և ընդհանրական քրիստոնեական եկեղեցին**. «Որովհետև մեզ հայր ենք ճանաչում սուրբ ավետարանը, և մայր՝ առաքելական կաթողիկե եկեղեցին. թող ոչ ոք իբրև չար անջրպետ մեջ ընկնելով՝ մեզ սրանից չբաժանի» (էջ 135): Հրաժարվել քրիստոնեությունից, նշանակում էր հրաժարվել սեփական ինքնությունից: Այս երկուսն այլևս անբախտելիորեն միահյուսված են և երբեք չեն կարող բաժանվել: «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված» (էջ 81): Հայերը, ըստ Եղիշեի, ոչ թե ձևացնում են, թե քրիստոնյաներ են, այլ իսկապես քրիստոնյաներ են: «Նա, - ասում է Վարդան Մամիկոնյանը, - որ կարծում էր, թե մենք քրիստոնեությունն իբրև զգեստ ունենք հագած, այժմ չի կարողանում մեզ փոխել, ինչպես մարմնի գույնը (չի կարելի փոխել), գուցե այլևս չկարողանա էլ մինչև վերջը: Որովհետև սրա հիմքերը հաստատ կերպով դրված են անշարժ վեմի վրա, ոչ թե երկրի վրա, այլ վերևում՝ երկնքում...» (էջ 207): Թվարկելով հայոց ապստամբության պատճառները՝ Եղիշեն գրում է, թե «ամենից վատթարը» այն էր, որ պարսից արքունիքը ձեռք բարձրացրեց եկեղեցու վրա. քանի դեռ «հայտնի կերպով ձեռք չէր տվել եկեղեցուն, այդ պատճառով էլ ոչ ոք նրան չընդդիմացավ, թեև հարկերը ծանր էին» (էջ 47): Այսինքն՝ եկեղեցին ու հավատքը այլևս ինքնութենական այն արժեքներն են, որոնց համար արժե «սպանել ու մեռնել», չարչարվել ու տանջանքներ կրել:

Ինքնության նոր հարացույցը ենթադրում է «Մենք»-ի և «Նրանք»-ի սահմանազատում: Ընդսմին, այդ երկուսի կառույցի մեջ մտնում են նաև անցյալ (մինչև Դարձը) և ներկա (Դարձից հետո) ժամանակները՝ որպես մարդկային կեցության տարբեր չափումներ: Նոր ինքնության հարացույցը ստեղծելու համար հարկավոր է հեղինակագրկել ու արժեզրկել նախորդ ինքնության հարացույցը, դա ներկայացնել բացասական գույներով, վեր

հանել դրա կրողների անբարո վարքը և այլն: Եղիշեի աշխատության մեջ հստակորեն ուրվագծվում է «Մենք»-ի և «Նրանք»-ի տարբերակումը: Դրա հիմքում ընկած են նախ և առաջ կրոնական ու բարոյական չափանիշներ: Քրիստոնյա լինելը դառնում է ազգային ինքնության ձևավորման այն առանցքը, որի շուրջ կառուցվում են մյուս հատկությունները: Կենսաբանական-մարդաբանական և ազգային կողմերը գրեթե անտեսվում են կամ չեն կարևորվում: Ավելին, խնդիր է դրվում դրանք արմատախիլ անելու: Օրինակ, պատմելով Մարաց կողմերում Մաշտոցի առաքելության մասին, Կորյունը գրում է, որ դարձի եկողները այնպես հանգամանորեն խորամուխ եղան «օրենքների ու պատգամների մեջ, որ մինչև անգամ բոլորովին դուրս եկան իրենց ազգակցությունից»⁵: Իսկ Դարձի եկած Տրդատի և Գրիգոր Լուսավորիչի համար հեթանոսական արժեքների ոչնչացումը առաջնահերթ քայլ էր. «Ապա թագավորը իսկույն տիրաբար հրաման տվեց, ամենքի հավանությամբ, գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախկին հայրենի, հնամենի և նախնիների ու իր կողմից Աստված անվանված չաստվածները անհիշատակ դարձնի, մեջտեղից ջնջի»:... «Իսկ երանելին, իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով, թագավորի անկեղծ օժանդակությամբ, սկսեց գավառում (քարոզել), ամենքին դուրս բերեց նախնիների ավանդույթներից, սատանայապաշտ դիվական սպասավորությունից և մոտեցրեց Քրիստոսի հնազանդ ծառայությանը»⁶:

«Մենք» տարբերվում ենք «Նրանք»-ից առաջին հերթին կրոնով և դրանից բխող՝ իմացական և բարոյական հատկություններով: «Մենք» քրիստոնյա ենք, իսկ «Նրանք»՝ հեթանոսներ՝ կրակապաշտներ, զրադաշտականներ: «Մենք» հավատում ենք Աստծուն, իսկ «Նրանք»՝ չաստվածների, Աստծու կողմից ստեղծված տարրերին: «Մենք» ճշմարտության բարեկամն ենք, ճշմարտության կրողները, «Նրանք»՝ ճշմարտության թշնամիները, «Մենք» լուսապաշտ ենք, «Նրանք»՝ խավարասեր: «Մենք» բարի ենք, առաքինի, «Նրանք»՝ չար, վայրենաբարո ու տմարդի: Եթե «Նրանք» ճշմարտության «արտաքին» թշնամիներն են, ապա Եղիշեն «Մենք»-ի մեջ առանձնացնում է ճշմարտության «ներքին» թշնամիներին՝ Եկեղեցու ուխտից հրաժարվածներին, որոնց անվանում է ուխտադրուժներ, ուրացողներ, չարագործներ, անօրեններ, դավաճաններ և այլն:

Ինքնության նույնականացումը հավաստի է դառնում, երբ դա փաստում են նաև ուրիշները: Թեև պարսից արքան «բոլոր ազգերի վերաբերմամբ էր անկարգություն անում», «բայց ավելի Չայոց աշխարհի դեմ էր մարտնչում. որովհետև նրանց ավելի ջերմեռանդ էր տեսնում աստվածապաշտության մեջ» (էջ 33): Ոչ միայն հայերն են իրենց համարում քրիստոնյաներ, այլև արդեն ուրիշ ազգերի ներկայացուցիչների գնահատմամբ նրանք են քրիստոնեական արժեքների կրողները, քրիստոնեության առաջամարտիկները: Պարսից բանակում ծառայող բազմաթիվ այլազգիներ, որոնք քրիստոնյաներ էին, երբ «տեսան Չայերի չար հանձնառությունը (կեղծ ուրացությունը – Ս. Ձ.), սաստիկ խոցվեցին իրենց մտքերում և կործանվեցին-գետին ընկան իրենց երեսների վրա: Նրանցից շատերը ծանր

⁵ Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 2005, էջ 57:

⁶ Ազաթանգեղոս, Չայոց պատմություն, Եր., 1983, էջ 437, 441:

սուգ թախծի մեջ՝ վշտացած հոգով ու դառն արտասուքով եկան ու հանդիմանեցին նախարարներին և խիստ պախարակեցին քահանաների խմբին» (էջ 109): Պարսից արքունիքում հայերի ուրացությունից հետո այլազգի քրիստոնյաները հետևյալ բառերով էին նախատում հայ նախարարներին ու քահանաներին. «Առաքելական քարոզության վարդապետներ էիք, այժմ այն մոլար խաբեության աշակերտ պիտի լինեք: Ճշմարտության ուսուցիչներ էիք, այժմ մոգերի սուտ խաբեությունը պիտի սովորեցնեք: Արարչական զորության քարոզիչներ էիք, այժմ տարրերին աստված եք դավանում: Ստությունը հանդիմանողներ էիք, այժմ ստից էլ ավելի՞ սուտ պիտի լինեք: Հրով և հոգով էիք մկրտված, այժմ պետք է մոխրի և փոշու՞ մեջ թաթախվեք: Կենդանի մարմնով և անմահ արյունով էիք սնված, այժմ զոհերի ճարպի և կեղտոտ արյունի՞ մեջ պիտի աղտոտվեք: Սուրբ հոգու տաճար էիք, այժմ դևերի զոհարա՞ն պիտի լինեք: Քրիստոսազգյաց էիք մանկությունից, այժմ այդ փառքերից զրկված՝ դևերի նման արեգակի առաջ պիտի պարեք» (էջ 111):

Եղիշեն բավարարվում է հայերին նույնացնելով քրիստոնեության հետ և այս իմաստով նա հայերի և այլազգի քրիստոնյաների (տվյալ դեպքում՝ հույների) միջև չի տեսնում էական տարբերություն: Դիմելով Թեոդոս կայսրին՝ հայերը հիշեցնում են իրենց և հույների (հռոմեացիների) վաղեմի բարեկամության փաստը. Տրդատը «ձեր օգնությամբ թագավորելով տիրեց իր հայրենի աշխարհին, սույնպես և Քրիստոսի հավատն ընդունելով Հռոմի սուրբ Եպիսկոպոսապետից, լուսավորեց հյուսիսի խավար կողմերը, որ և ահա արևելքի խավարասեր որդիներն ուզում են խլել, կորզել մեր ձեռքից» (էջ 145): Երկու ժողովուրդներն էլ քրիստոնյա են, ուստի հայերը, ապստամբելով «ճշմարտության թշնամիների» դեմ, ակնկալում էին քրիստոնյա Արևմուտքից ստանալ օգնություն: Հռոմի կայսրը, ելնելով իր երկրի շահերից, հրաժարվում է օգնության ձեռք մեկնել: Հետաքրքիրն այն է, որ այս դեպքում Եղիշեն չի մեղադրում առհասարակ քրիստոնեական Արևմուտքին, այլ մեղքը գցում է առանձին անհատների, հատկապես Մարկիանոս կայսեր վրա (որի խորհրդականներին նա անվանում է «անաստված»): «Իսկ այս անարի մարդը ավելի լավ էր համարում իր դաշինքը պահել հեթանոսների հետ մարմնական խաղաղության համար, քան թե քրիստոնեության ուխտին պատերազմակից լինել: Այդ պատճառով էլ շտապեց, դեսպաններ ուղարկեց Պարսից թագավորի մոտ... և հաստատուն դաշն կնքեց նրա հետ՝ օգնություն ցույց չտալ Հայոց զորքին ո՛չ զորքով և ո՛չ էլ զենքով ու ամեն տեսակ օժանդակությամբ» (էջ 147): «Քրիստոնեական ուխտի» միջև կարծես հորս է ցնդում, սակայն հայերը, ավելի շուտ՝ ուխտապահները, չեն ուզում հրաժարվել միջի պատրանքից: Միջև փոխարինում է իրականությանը: Ավելի լավ է միջի մեջ ապրել երջանիկ ու խաբված, քան դժբախտ՝ իրականության մեջ: Միջի հորս ցնդումը ուժեղացնում է հնարավոր տառապանքի ու չարչարանքների չափը:

Ինքնության հարացույցում առանցքային նշանակություն ունի հիշողությունը, անցյալի նկատմամբ վերաբերմունքը: Եղիշեն 5-րդ դարի առաջին կեսի մատենագիրների (Կորյուն, Եզնիկ Կողբացի) նման ուշադրություն չի դարձնում հայ ազգի ծագումնաբանությանը և պատմությանը:

Նրա համար հեթանոսությունը թշնամական կրոն էր, հեթանոսները՝ մոլորված, դիվապաշտ մարդիկ, ուստի հայերի հեթանոսական անցյալը նրա համար կարծես թե զոյություն չունի: Համենայն դեպս, այդ անցյալը նա բնավ չի կարևորում, որովհետև նրա համար ոչ մի կենսական արժեք չի ներկայացնում: Պատմական անցյալը կարևորում է այնքանով, որքանով այն կապվում է քրիստոնեության հետ:

Քրիստոնեական հավատի միջոցով կապ է հաստատվում նախնիների հետ, տեղի է ունենում հոգեբանական նույնացում նրանց հետ: «Մենք ոչնչով ավելի լավ չենք մեր նախնիներից, որոնք այս հավատի համար դրին իրենց զույքն ու ստացվածքը և մարմինները» (էջ 81): Նման նույնականացման հետևանքով անցյալի ու ներկայի սերունդները ձեռք են բերում միևնույն ճակատագիրը, դառնում հարազատ, ճանաչելի ու հասկանալի: Սակայն Եղիշեի համար «նախնիները» հեթանոս հայերը չեն: Այս պատճառով է, որ նա ուշադրություն չի դարձնում հեթանոսական շրջանի հայոց պատմությանը: Ավելին, Եղիշեն նույնիսկ չի հիշատակում Գրիգոր Լուսավորիչին, Ներսես Մեծին, Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին, այսինքն՝ զարմանալիորեն նա չի կարևորում նաև քրիստոնյա մերձավոր նախնիներին, ովքեր ինքնության նոր հարացույցի ձևավորման գործում մեծ ավանդ ունեին (սա նշանակում է, որ նրա ժամանակ քրիստոնեական հարացույցի բոլոր խորհրդանշանները, պատմական միջերը դեռևս մշակված չէին): Եթե նույնիսկ դա դիտենք որպես զրակենտրոն մշակույթին բնորոշ ձև, այնուամենայնիվ չենք կարող անտեսել այն փաստը, որ ըստ նրա՝ հայոց թագավոր Տրդատը քրիստոնեությունն ընդունել է ոչ թե Գրիգոր Լուսավորիչից, այլ «Հռոմի սուրբ եպիսկոպոսապետից» (էջ 145): Նրա ներկայացրած նախնիները հիմնականում աստվածաշնչյան, համաքրիստոնեական հանրահայտ անուններ են: Այսպիսի մոտեցումը պետք է բնական համարել. դա ինքնության քրիստոնեական հարացույցի կերտման սկզբնական շրջանին բնորոշ արտահայտություն է: Այս փուլում բուն ազգայինը դեռ համարվում է ոչ այնքան նշանակալից, անկարևոր, քանզի ազգությունը նույնականացնում է հեթանոսության հետ, ուստի ազգայինն առնվում է փակագծերի մեջ: Գլխավորը քրիստոնեական համամարդկային արժեքների յուրացումն է: Գաղափարական միջի հորինման սկզբնական փուլում դեռևս չեն կարևորվում ինքնության նոր հարացույցի պատմական, ազգային հիմքերը: Բայց դրա հետևանքով հանդես է գալիս նոր հայը, որը չունի սեփական անցյալ: Եթե ինքնության հարացույցը անցյալ չունի, ապա այն պետք է հորինել, որովհետև առանց պատմական շերտի հնարավոր չէ պատկերացնել որևէ ինքնության հարացույց: Ինքնության նոր հարացույցի կողմնակիցները պետք է կարողանան ներշնչվել պատմությունից, իմաստավորել պատմական դեպքերը, ոգեկոչել անցյալի հերոսներին և իրենց զգացմունքները հաղորդել մարդկանց: Ընդամին, որքան միջակայք, սուրբգրային, վաղնջական, այնքան՝ ավելի հավաստի: Եթե դա սեփական ազգի անցյալը չէ, ապա պետք է լինի ինչ-որ անցյալ, որովհետև առանց անցյալի, առանց պատմության ու պատմական հիշողության հնարավոր չէ ինքնության հարացույցի արարում: Եղիշեն հիշում է այն, ինչ պետք է հիշի քրիստոնեության հետ իր ինքնությունն անմնացորդ նույնականացնող գաղափարախոսը: Այստեղից էլ՝ անցյալի

Որա հերոսները աստվածաշնչյան հերոսներն են, որոնց, բնականաբար, պետք է ընդօրինակել, հետևել ու նմանվել:

Ինքնության հարացույցը պետք է կատարի համախմբման և վարքի կարգավորման իր գործառույթները: Ավարայրի ճակատամարտի նախօրյակին Վարդան Մամիկոնյանը և Ղևոնդ երեցը ճառով հանդես են գալիս հայոց բանակի առջև, ոգևորում զինվորներին՝ օրինակ բերելով միայն աստվածաշնչյան հերոսներին: Բանակի հայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով նրանք ոգեկոչում են ոչ թե անցյալի հայ զորավարների ու թագավորների, այլ աստվածաշնչյան հերոսների խիզախությունը, հայրենամյներ գոհաբերությունը և Քրիստոսի մեծագործությունները: «Եվ պատերազմական կարգի համաձայն՝ քաջ տղամարդկանց հիշատակության արժանի գործերը շարունակ կրկնում էր (իմա՝ Վարդան Մամիկոնյանը - Ս. Չ.) նրանց առաջ, որովհետև հենց ինքն էլ մանկությունից տեղյակ էր սուրբ կտակարաններին: Եվ ձեռքն առնելով Մակաբայեցոց քաջ նկարագիրը՝ կարդում էր, որ բոլորը լսեն, և հորդառատ խոսքերով նրանց հասկացնում էր գործերի հանգամանքները, թե ինչպես մարտնչելով կռվեցին աստվածատուր օրենքների համար Անտիոքացիների թագավորի դեմ: Թեպետև նրանք նույն պատերազմի մեջ իրենց մահը գտան, բայց նրանց քաջ անունն անմոռաց մնաց մինչև այսօր ո՛չ միայն երկրի վրա, այլև երկնքում» (էջ 211):

Ավելի մեծ թվով աստվածաշնչյան հերոսների է վկայակոչում Ղևոնդ երեցը: Դիմելով հայոց զորքին՝ ասում է՝ հիշեցեք մեծն Մովսեսին, որն իր անձով վրեժ լուծեց եգիպտացիներից և «արյուն թափելով արդարացավ և բոլոր մարգարեներից ավելի մեծ կոչվեց», հիշեցեք Քրիստոսին, որը մահվամբ իր անձը զոհեց մեզ համար, «մենք էլ ուրեմն մահվամբ մեր անձը զոհենք նրա անմահ զորության համար, որպեսզի վրեժխնդիրներից ավելի պակաս չգտնվենք»: Հիշեցեք Իսրայելի բոլոր նախկին զորավարներին, որոնք ջարդեցին-կոտորեցին թշնամիների զորքը, իրենց քաջության համար գովաբանվեցին մարդկանց կողմից, և Աստված էլ նրանց արդարացրեց: Այսպիսի ոգեկոչումներից հետո նա անում է հետևյալ եզրակացությունը. «Այս գիտենալով, եղբայրներ, չթուլանանք ու չվհատվենք, այլ պինդ սրտով և հաստատուն հավատով հոժարական հարձակվենք այն թշնամիների վրա, որ վեր են կացել-գալիս են մեզ վրա» (էջ 223):

Դիտելի է, որ քրիստոնյայի մասին Եղիշեի պատկերացումները տարբերվում են «դասական» քրիստոնյայի վերաբերյալ եղած պատկերացումներից: Ավելի շուտ, նա առաջադրում է քրիստոնյայի այնպիսի կերպար, որը որոշ առումներով դեռևս նման է հեթանոսականին: Նրա պատկերած քրիստոնյան հեթանոսի նման պատրաստ է կռվով պաշտպանելու իր արժանապատվությունն ու կրոնական արժեքները: Մինչդեռ «դասական» քրիստոնյան պետք է համբերությամբ, հնազանդությամբ և անմոռնչ ենթարկվի «տերերին» կամ ստեղծված հանգամանքներին՝ հույս ունենալով, որ հանդերձյալ աշխարհում կհաղթի արդարությունը, և չար մարդիկ կստանան համապատասխան հատուցում: Աստծու ճշմարիտ ծառաներին, գրում է Եղիշեն, «օրենք չէ ընդդիմանալ երկրավոր իշխաններին, և ժողովրդից ոչ ոքի՝ տրտնջալ մարմնավոր աչքածակության համար, այլ խոնարհությամբ և

հեզությամբ սովորեցնել Աստու պատվիրանները, և առանց խարդախամտության խաղաղասեր լինել բոլորի վերաբերմամբ, և անաչառ վարդապետությամբ բոլորին առաջնորդել դեպի արարածների միակ Տերը» (Էջ 343): Եղիշեի ներկայացրած քրիստոնյան նույնպես ինչ-որ իմաստով նման է «դասական» քրիստոնյային, սակայն այն տարբերությամբ, որ պահպանել է իր հոգեկերտվածքի հեթանոսական միջուկը: Նրա քրիստոնյան վիրավորվում է, բորբոքվում, բողոքում, ընդվզում, պաշտպանում իր արժանապատվությունը, ձգտում քաջի անուն վաստակել, հպարտանում իր ռազմական հաջողություններով ու սխրանքներով: Նա չարին հակադրում է չարը և հեթանոսից հետ չի ընկնում իր դաժանությամբ ու ռազմատենչությամբ: 450 թվականին Խաղխաղ բնակավայրի մոտ, պատմում է Եղիշեն, թշնամին «սփռվեց իր ամբողջ զորքով, բանակ դրեց և դաշտի ամբողջ մեծությունը բռնեց. զինված ու լիովին սպառազեն դուրս եկան կռվելու Հայոց զորքի դեմ: Իսկ քաջ Վարդանը և նրա հետ գտնված ամբողջ զորքը, երբ տեսան հեթանոսների զնդի մեծ պատրաստությունը, նայեցին նաև իրենց սակավությանը. թեև թվով նրանցից շատ ավելի քիչ էին, բայց ամենևին չվախեցան նրանց մեծ բազմությունից, այլ բոլորը միասին իրենց ձեռքերը դեպի երկինք բարձրացրին, աղաղակում էին և ասում. «Պատի՛ր, Տե՛ր, նրանց, ովքեր դատում են մեզ. կռվի ելիր նրանց դեմ, ովքեր ահա մարտնչում են մեր դեմ. քո զենքով ու ասպարով օգնի՛ր մեզ: Թափահարիր և դողացրո՛ւ այս անօրենների զունդագունդ բազմությունը. ցրի՛ր և ոչնչացրո՛ւ քո թշնամիների չար միաբանությունը այս քո փրկական մեծ նշանի առջև և մեր՝ սակավաթիվներիս ձեռքով քաջություն և հաղթություն պարգևիր այս անհամար բազմության դեմ»: Այս ասելով՝ խումբ կազմեցին ու հարձակվեցին, և աջ թևը ճեղքելով՝ ձախ կողմը զցեցին, բոլորին սրի ճարակ արին ամբողջ դաշտի վրա և փախցրին...» (Էջ 153): Ավարայրի ճակատամարտից առաջ Վարդանը հիշեցնում է զորքին. «Իսկ արդ՝ երկու և երեք կռիվների մեջ ինքը Տերը մեծ զորությամբ օգնեց մեզ, այնպես որ քաջության անուն ժառանգեցինք և արքունի զորքը չարաչար ջարդեցինք, մոզերին էլ անողորմ կերպով կոտորեցինք և կռապաշտության պղծությունը մի քանի տեղերից սրբեցինք, թագավորի հրամանը ջնջեցինք-ոչնչացրինք...» (Էջ 207): Եղիշեն կարծես «մոռանում» է, որ այդպես կարող են վարվել ոչ թե քրիստոնյաները, այլ հեթանոսները, որոնց համար քաջությունը, խիզախությունը գլխավոր առաքիությունն է: Ինքնության հեթանոսական հարացույցի ցուցիչներից մեկը վերառնվում է և նոր հարացույցում դառնում հավատքի պաշտպանի արժանիքը: Եղիշեն ոչ մի տեղ չի հիշատակում «Սիրեցեք ձեր թշնամիներին» քրիստոնեական պատվիրանը⁷: «Ապստամբության պատմիչը, - իրավացիորեն նկատում է Գ. Խրլոպյանը, - առաջ է քաշում նաև խաչի ու սրի, պայքարի ու սիրո միասնության գաղափարը: Հայրենի աշխարհն ու հավատքը պաշտպանում է ոչ միայն աղոթքով, այլ նաև սրով:...Եղիշեն, Եզնիկի և այլ առաջադեմ մտածողների նման, փորձում է ընդհանուր եզրեր գտնել ենթարկվա-

⁷ Այս կապակցությամբ Նժդեհը նշում է, թե «Ցեղի և նրա հավատի փրկության համար հայ եկեղեցին ոտի տակ է առնում հիսուսական ներողամտության բովանդակ բարոյականը և դառնում է քրիստոնեության զինված բազուկը» (Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, Եր., 2002, էջ 239-240):

ծութիւնն ու ծայրահեղ ներողամտութիւնն քարոզող քրիստոնէութեան ու ազատագրական գաղափարախոսութեան միջև: Եթէ նա համաձայնվեր մի երեսիդ հարվածողին մյուս երեսդ տուր կոչի հետ, ապա պետք է հրաժարվեր ապստամբութեան արդարացումից ու պաշտպանութիւնից: Չհամաձայնվելով քրիստոնէական այդ պահանջի հետ և միաժամանակ չկարողանալով մերժել կրոնը, նա զարգացնում է սրի ու խաչի միասնութեան գաղափարը»⁸:

Ինքնութեան ամեն մի հարացույց պետք է ունենա իր հերոսները և նահատակները:

Եղիշեի խնդիրներից մեկը իդեալականացման ու միջակայացման ճանապարհով ինքնութեան հարացույցի հերոսների կերտումն է, ըստ Ս. Գրքի կանոնների: Իրբև նախատիպար հանդես են գալիս աստվածաշնչյան հերոսները: Ընդ որում, այդ հերոսները ներկայացնում են թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր ուղորտները: Եղիշեի աշխատութեան գլխավոր հերոսը Վարդան Մամիկոնյանն է՝ աշխարհիկ զորավար, որը պետք է դառնա հավատքի պաշտպանութեան նահատակ: Ձորավար, որում հայրենասիրութիւնը և հավատապաշտութիւնը իդեալական միասնութեան մեջ են: Վարդանը վերափոխատվորում է իր ապրած կյանքը. մինչ այդ նա պատերազմել էր ուրիշների համար, փառավորվել մարմնական սխրանքներով, ապրել երկիմաստ կյանքով (իբրև քրիստոնյա՝ նա կռվում էր հեթանոսների և հեթանոսական արժեքների համար): Ավարայրի ճակատամարտից առաջ նա դիմում է զորքին. «Շատ պատերազմներ են մղել ես, և դուք էլ ինձ հետ. տեղ կար, որ քաջաբար հաղթեցի՞նք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղթեցին մեզ. բայց ավելի շատ այն է, որ հաղթող ենք դուրս եկել և ոչ թէ հաղթված: Բայց այդ բոլորը մարմնավոր պարծանք էր, որովհետև անցավոր թագավորի հրամանով էինք մարտնչում:... Եվ մեզնից ամեն մեկս էլ ահավասիկ շատ վերքեր ու սպիներ ունենք մեր մարմինների վրա, և ուրիշ շատ քաջութիւններ էլ են եղել, որոնց համար և մեծամեծ պարգևներ են ստացվել: Անարգ և անօգուտ են համարում այդ քաջութիւնները և ոչինչ բաներ՝ այդ բազմաթիվ պարգևները, որովհետև բոլորն էլ ոչնչանալու են» (էջ 203): Այս երկիմաստ ու երկարժեք կյանքը ուրիշների մոտ այն տպավորութիւնն էր ստեղծել, թէ «մենք քրիստոնէութիւնն իբրև զգեստ ունենք հագած»: Իսկապէս, քրիստոնյան ինչո՞ւ պետք է իր կյանքը զոհաբերեր հեթանոսական արժեքների համար: «Մենք» կոնցեպցիան չպետք է այդքան ակնհայտ հակասական և դուալիստական լինի: Ազգային ինքնութեան հարացույցի ստեղծման ուղին երկիմաստութեան հաղթահարումն է: Ինքնութեան Յերոսը հաղթահարում է երկփեղկվածութիւնը. նա կռվի է դուրս գալիս ոչ թէ անցավոր մարմնական փառքի, այլ հավերժական արժեքների, անմահ Թագավորի համար: Նա զենքով պաշտպանում է իր հավատքը: Յեթանոսական առաքինութիւնները նրանում վեհացվում (սուբլիմացվում) և դառնում են քրիստոնէական արժեքներ. «Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմութիւնից և ո՛չ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք. որպեսզի եթէ Տերը հաղթութիւնը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորութիւնը, որպեսզի բարձրանա ճշմարտութեան

⁸ **Գ. Տ. Խրլոպյան**, Հայ սոցիալական իմաստասիրութեան պատմութիւն (Հելլենիստական ու վաղ ֆեոդալական շրջան), Եր., 1978, էջ 180-181:

կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք» (էջ 206-207): Վարդանի աշխարհայացքում ավարտվում է «հեթանոսական փուլը», սակայն նա չի կարող մեկնել հրաժարվել հոգևոր, բարոյական այն արժեքներից, որոնցով ապրել է իր կյանքի ընթացքում: Այժմ այդ արժեքները «զգեստավորվում» են, քրիստոնեական տեսք են ստանում, սակայն այդ «զգեստների» տակից երևում են սպիներն ու վերքերը՝ հեթանոսական առաքինությունների նշանները: Եղիշեն տալիս է քրիստոնեական արժեքների այնպիսի մեկնաբանություն, որը պետք է դառնա ազգային ինքնության նոր հարացույցի բովանդակային անկապտելի բաղկացուցիչը:

Այսպիսով, Եղիշեն կերտում է ինքնութենական երկու տիպի սիմվոլ՝ աշխարհական գորավարի, որն իր ներքին էությանը հոգևորական է, և հոգևոր առաջնորդի, որը ըստ հարկի կարող է նաև լինել զինվորական: **Ձինվորականը հոգևորական է, իսկ հոգևորականը՝ զինվորական:** Ի դեպ, ակնհայտ է մեկ անձի մեջ այս երկուսի համատեղումն է: Վարդանը և Ղևոնդ երեցը իդեալական հայ քրիստոնյայի տիպարներ են: Ի հակադրություն այս երկու դրական սիմվոլների՝ նա ստեղծում է նաև հակասիմվոլ՝ ուրացողի, դավաճանի կերպարը (ի դեմս Վասակ Սյունու):

Եղիշեի ներկայացրած Վասակ Սյունին մարզինալ անձնավորության տիպար է: Նա պարսիկների կողմից նշանակված է Հայաստանի մարզպան և ի պաշտոնե կոչված է պաշտպանելու պարսից արքունիքի շահերը: Իր մարզինալ կարգավիճակի պատճառով նա պետք է դառնա «օտար յուրայինների մոտ» և «յուրային օտարների մոտ»: Թե՛ օտարները և թե՛ յուրայիները նրան նայում են կասկածանքով: Նման կարգավիճակը նպաստավոր է **դավաճանի** կերպարի ստեղծման համար: Եղիշեի համար հեշտ չէ ստեղծել Վասակ Սյունու՝ դավաճանի, ուրացողի կերպարը: Նրա միտումնավորությունը ակնհայտ է: Նա երկար է պատմում դավաճանի մասին, փորձում փնտրել բազմաթիվ մանրամասներ՝ թաքցնելու համար իր միտումնավորությունը: Նրան ավելի շատ հետաքրքրում է արդեն Ուրացողի կերպարի ամբողջական ստեղծումը, քան թե պատմական գործիչ, հայոց մարզպան Վասակ Սյունու բուն գործունեությունը: Այս դեպքում ևս գրքային կանոնները վերաձևում են իրականությունը, այսինքն՝ ստեղծվում է Աստվածաշնչից հայտնի, Աստվածաշնչում նկարագրված ուրացողի կերպար: Հարկավոր է ստեղծել Ուրացողի սիմվոլը, որը պետք է լինի տիպական ու ամբողջական: Ո՛չ մի լուսավոր գիծ, ո՛չ մի դրական բնութագիր: Այդ կերպարը պետք է խորհրդանշի հակաքրիստոնեականը և հակամարդկայինը: Նա ոչ միայն դավաճանում է եկեղեցու Ուխտին, այլև ոտնահարում է մարդկային բարոյական արժեքները: Ավելին, Եղիշեն հատկապես ուշադրություն է դարձնում վերջին կողմի վրա՝ ցանկանալով մեկ անգամ ևս ցույց տալ այն մտքի ճշմարտացիությունը, որ դավաճանի ծառայությունից օգտվողները չեն հարգում նրան, որովհետև մի օր էլ իրենց կդավաճանի: Նա փորձում է հենց այդպես էլ ներկայացնել Վասակին: Վերջինս դավաճանում է հայերին, բայց պարզվում է, որ այդ ընթացքում միաժամանակ դավաճանել է նաև պարսիկներին: Եղիշեի աշխատության մեջ Վասակ Սյունին, Կորյունի բնորոշմամբ՝ այդ «խելացի ու հանճարեղ և կանխագետ, աստվածային իմաստության

շնորհքով օժտված» այրը, վերածվում է մի խղճուկ արարածի՝ Ուրացողի անփառունակ խարանով: Պարսից արքունիքում տեղի ունեցած դատավարությունից պարզվում է, որ «հայոց պատերազմի» նախաձեռնողն ու կազմակերպողը եղել է Վասակ Սյունին՝ հայոց թագավորությունը վերականգնելու տեսլականով, մոգերին ու պարսից զորախմբերին Վարդան Մամիկոնյանը կոտորել է նրա կարգադրությամբ, պարսկական արքունիքի հետ նա է համաձայնության եկել՝ կրոնական ճնշումը դադարեցնելու, եկեղեցու իրավունքները վերականգնելու պահանջով...⁹, այդ պատճառով էլ պատասխանատու է թե՛ պարսիկների և թե՛ հայերի դժբախտությունների համար:

Գլխավոր դրական հերոսների կողքին եղիշեն կերտում է նաև «դասական քրիստոնյաների»՝ հայոց հոգևորականների կերպարները, ովքեր պատրաստ են պաշտպանելու իրենց հավատքը՝ ինքնությունը, և հանուն Քրիստոսի զոհաբերելու իրենց անձերը: Ընդամին, նրանք, արժևորելով Քրիստոսի համամարդկային մեծագործությունը, իրենց չարչարանքները համարում են «փոքր բան»: Եվ փորձում են իրենց նվիրվածությամբ ու անձնագոհությամբ նմանվել Քրիստոսին: «Նրանց մրմունջներն ու երգերը սաղմոսներն էին, իսկ կատարյալ ուրախությունը՝ սուրբ գրքերի ընթերցումը: Ամեն մարդ ինքն իր մեջ եկեղեցի էր և նույն ինքը քահանա. յուրաքանչյուր մարմին սուրբ սեղան էր, և նրանց հոգիները՝ ընդունելի զոհաբերություն» (էջ 253): Սակայն նրանք Ավարայրի հերոսներից են, ովքեր առաջնորդվում են գիտակցված մահվան փիլիսոփայությամբ: Երանելի հայրերը իրար մխիթարում էին հետևյալ խոսքերով. «Քաջությամբ պատերազմեցինք, էլ ավելի մեծ համբերությամբ տանենք չարչարանքները: Մեր սուրբ հայրերից լսել ենք, որ բոլոր առաքինություններից գլխավորը համբերությունն է, և կատարյալ աստվածապաշտությունը՝ երկնավոր իմաստություն. իսկ այս բանը ոչ ոք չի կարող առանց չարչարանքի ձեռք բերել: Իսկ երբ չարչարանքը երկարաձգվում է, այն ժամանակ շատանում է նաև պարզև ու վարձահատուցումը» (էջ 277): Բանտերում և աքսորավայրերում նրանք իրենց պահում են համարձակորեն ու արժանապատվորեն՝ թշնամուն ապացուցելով, որ ոչ ոք չի կարող իրենց հավատափոխ անել:

Այսպիսով, պատմական իրադարձությունների իմաստավորման միջոցով եղիշեն կառուցակազմում է ազգային ինքնության քրիստոնեական հարացույցը՝ հայերին նույնականացնելով քրիստոնեության հետ, և քրիստոնեական արժեքները պաշտպանելով՝ դրանք վերածում այլևս ազգային արժեքների: Թեև եղիշեն փորձում է քրիստոնեական կրոնը և եկեղեցին դարձնել հայոց ինքնության հիմնաքարերը, անտեսել հայոց հեթանոսական անցյալը, Ս. Գրքի կանոններով և օրինակներով վերաիմաստավորել պատմական դեպքերը, աստվածաշնչյան նախնիների նմանությամբ ստեղծել քրիստոնեական ինքնության հերոսներին ու հակահերոսներին, այնուհանդերձ, նրա կառուցակազմած հարացույցում նկատելի են հեթանոսական շրջանի հայոց ինքնության՝ հոգեկերտվածքի և վարքագծի արխետիպային որոշ գծեր:

СЕЙРАН ЗАКАРЯН – Из истории становления христианской парадигмы армянской идентичности (Египше). – Христианская парадигма армянской

⁹ Տե՛ս **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 197-203:

идентичности проходила становление в два этапа: а) крещение армян, распространение и освоение христианских ценностей, б) самоотождествление армян с христианством и восприятие ими последнего как самостоятельной системы. Осмысляя в своём труде “О Вардане и войне армянской” исторические события, Егише указывает на некоторые составляющие армянской идентичности. Во-первых, он идентифицирует армян в качестве христиан, четко различая “Мы” (армяне-христиане) и “Они” (язычники, персы-зороастрийцы); во-вторых, защищая христианские ценности, делает их системообразующими факторами национальной идентичности.

Христианская вера и церковь являются для Егише краеугольными камнями новой идентичности. Он осмысляет исторические события в русле религиозных канонов, иллюстрирует их примерами из Священного писания и, пренебрегая языческим прошлым народа, создаёт новых героев и антигероев, сравнивая их с библейскими персонажами. Несмотря на всё это, в сконструированной им парадигме заметны архетипические черты душевного склада и поведения армян, присущие эпохе язычества.

SEYRAN ZAKARYAN – *From the History of Construction of Christian Paradigm of Armenian Identity (Yeghishe).* – In the article two stages of construction of Christian paradigm of Armenian Identity are separated; a) adoption and expansion of Christianity and assimilation of Christian values, b) self-identification with Christianity and conversion of it to a component that has system-creative potential for Identity. Armenian historiographer of the 5th century Yeghishe especially in his treatise “On Vardan and the Armenian War” presents some structural elements of Christian paradigm of national Identity by means of reasoning on historical events. First, he identifies the Armenians with Christianity; clearly segregates “**We**” (Christian Armenians) from “**They**” (pagans, Zoroastrian Persians), after that defending universal Christian values, he transforms them into system-creative factors of national Identity.

Though Yeghishe considers Christian religion and Church as the foundation stones for new Identity, reconsiders historical events with canons and examples of the Holy Bible, regardless of pagan past of the Armenians creates heroes and anti-heroes of new Identity similar to biblical ancestors, yet in the paradigm constructed by him some archetypical features of mentality and behavior of the Armenians of the pagan period can be noticed.